

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

15.11.2022

2022 թ. նոյեմբերի 1-ի վերաֆինանսավորման տրոկոսադրույքի արձանագրություն

**2022 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝
ՀՀ ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը, ՀՀ ԿԲ նախագահի տեղակալներ Ներսես Երիցյանը և
Հովհաննես Խաչատրյանը, խորհրդի անդամներ Հասմիկ Ղահրամանյանը, Դավիթ
Նահապետյանը, Լևոն Սահակյանը:**

Խորհրդի նիստը սկսվեց նոյեմբերի 1-ի դրությամբ Իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ: Քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային, ֆինանսական և դրամավարկային հատվածների զարգացումները:

Ներկայացվեցին արտաքին հատվածի ընթացիկ զարգացումները: Արձանագրվեց, որ երրորդ եռամսյակում ՀՀ հիմնական գործընկեր երկրներում պահպանվում են ցածր տնտեսական ակտիվության և բարձր գնաճի միտումները: Սակայն, եթե ԱՄՆ-ում բարձր գնաճի վրա գերակշռում է պահանջարկի գործոնների ազդեցությունը, ապա Եվրոմիության գնաճին հիմնականում նպաստում են առաջարկի, այն է՝ էներգակիրների գների աճի գործոնները: Ռուսաստանում մասնակի զորահավաքի բացասական ազդեցությունները պահանջարկի վրա կրել են ժամանակավոր բնույթ, ինչը մեծամասամբ չեզոքացվել է պետական ծախսերի ավելացման հաշվին: Վերջինիս հետ կապված անորոշությունները պարունակում են գնաճային էական ռիսկեր: Միաժամանակ, համաշխարհային տնտեսությունում դիտվում է արտադրաշղթաների որոշակի վերականգնում և տրանսպորտային բեռնափոխադրումների ծախսերի նվազում, սակայն արժեշղթաների խաթարումների հետ կապված ռիսկերը դեռևս պահպանվում են: Այս պայմաններում զարգացած երկրների կենտրոնական բանկերը շարունակում են էականորեն խստացնել դրամավարկային պայմանները՝ զսպելով պահանջարկը, որի արդյունքում միջազգային ապրանքահումքային և կապիտալ-ֆինանսական շուկաներում դիտվում է գների որոշակի նվազում՝ նպաստելով նաև համաշխարհային գնաճային միջավայրի մեղմմանը: Այդուհանդերձ՝ ՀՀ գործընկեր երկրների գնաճները բարձր են մնում նպատակային մակարդակներից և արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա ակնկալվում են թույլ գնաճային ազդեցություններ:

Խորհուրդը քննարկեց ՀՀ տնտեսության զարգացումները և արձանագրվեց, որ 2022թ-ի երրորդ եռամսյակում ևս պահպանվել է բարձր տնտեսական ակտիվություն՝ պայմանավորված գերազանցապես ծառայությունների ճյուղի զգալի աճով: Նշվեց, որ բարձր տնտեսական աճը պայմանավորող գործոններում գերակշռում է արտաքին պահանջարկը, որին շարունակում է մեծապես նպաստել Հայաստան միջազգային այցելուների և դրամական փոխանցումների ներհոսքի շարունակական աճը: Սա հատկապես արտահայտվում է կացության և հանրային սննդի ոլորտի դրական զարգացումներով, արտաքին հաշվեկշռվածության դիրքի բարելավմամբ և դրամի արժևորմամբ: Վերջինիս նպաստում է նաև ՏՏ և մշակող արդյունաբերության ոլորտում դրսևորվող արտահանման էական աճը: Միաժամանակ, բարձր պահանջարկը հանգեցնում է աշխատուժի շուկայի տաքացմանը, ընդհանուր գնաճային միջավայրի ընդլայնմանը և բարձր գնաճային սպասումների պահպանմանը: Նման իրավիճակում կարևորվում է հարկաբյուջետային և դրամավարկային կորրեկցիաները զսպող քաղաքականության իրականացումը:

Քննարկվեցին ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումները և արձանագրվեց, որ երրորդ եռամսյակում շուկայական կարճաժամկետ տոկոսադրույքները պահպանվել են քաղաքականության տոկոսադրույքի շրջակայքում: Արտերկրից ֆինանսական փոխանցումների զգալի ներհոսքով և արտահանման առաջանցիկ զարգացումներով պայմանավորված՝ երրորդ եռամսյակում ՀՀ արժույթային շուկայում ավելացել է արտարժույթի առաջարկը՝ նպաստելով դրամի շարունակական արժևորմանը: Արձանագրվեց, որ արտարժույթային մեծածավալ ներհոսքը առանձին իրավիճակներում գերազանցել է ՀՀ արժույթային շուկայի կլանելու կարողությունները՝

առաջացնելով շուկաների խաթարման ռիսկեր, ինչին ՀՀ ԿԲ-ն արձագանքել է արժութային շուկայում իրավիճակային մասնակցությամբ՝ գնելով արտարժույթ և նպաստելով ֆինանսական շուկաների բնականոն գործունեությանը:

Խորհրդին ներկայացվեցին նաև գնաճային զարգացումները, որի համատեքստում փաստվեց, որ 2022թ. սեպտեմբերին գրանցվել է 0.6% գնաճ՝ նախորդ տարվա նույն ամսվա 0.1% գնանկման փոխարեն: Ամսվա ընթացքում գնաճը պայմանավորվել է ծառայությունների, ոչ պարենային ապրանքների և պարենային ապրանքների գների՝ համապատասխանաբար 0.9%, 0.5% և 0.4% աճով: **Այս փոփոխությունների արդյունքում՝ 12-ամսյա գնաճն ավելացել է և ամսվա վերջին կազմել 9.9%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս ավելացել է՝ կազմելով 10.5%:**

Արձանագրվեց նաև, որ չնայած արտաքին հատվածից գնաճային ազդեցությունների որոշակի թուլացմանը, ինչպես նաև դրամի արժևորման գնանկումային նպաստմանը, գնաճային միջավայրը շարունակում է ընդլայնվել և գնաճային սպասումները մնում են բարձր՝ պայմանավորված միջազգային այցելուների և զբոսաշրջիկների մեծածավալ ներհոսքի հետևանքով ներքին տնտեսությունում ձևավորված էականորեն բարձր պահանջարկով:

Իրավիճակային հաշվետվության և արտաքին ու ներքին մակրոտնտեսական զարգացումների քննարկումից հետո Խորհուրդն անցավ մակրոտնտեսական սցենարների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների քննարկմանն ու քաղաքականության տոկոսադրույքի որոշման կայացմանը: Կանխատեսող թիմը Խորհրդին էր ներկայացրել վերոնշյալ մակրոտնտեսական իրավիճակում առաջիկա տնտեսական զարգացման հեռանկարների, այդ թվում՝ դրամավարկային քաղաքականության համապատասխան գործողությունների սցենարներ: Խորհրդի անդամների գնահատմամբ, արտաքին հատվածից առկա են գնաճային ազդեցությունների սպասվող թուլացման վերաբերյալ ազդակներ, իսկ մյուս կողմից ձևավորված դրական մեծ պահանջարկը զգալիորեն կնպաստի գնաճային միջավայրի ընդլայնմանը: Ուստի, կարևորելով հնարավոր գնաճային սցենարի դրսևորման և դրա ներքո գնաճային ռիսկերի կառավարման առաջնահերթությունը, Խորհրդի անդամները անհրաժեշտ էին համարում շարունակել դրամավարկային քաղաքականության հետևողական խստացումը: Խորհրդի առանձին անդամներ գտնում էին, որ նման բարձր պահանջարկի և գնաճի պայմաններում էականորեն ավելանում են նաև աշխատուժի շուկայից եկող գնաճային ռիսկերը, ուստի առավել արդյունավետ կլինի ավելի մեծ քայլով բարձրացնել քաղաքականության տոկոսադրույքը: Արդյունքում, **ԿԲ Խորհուրդը ձայների մեծամասնությամբ որոշեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացնել 0.5 տոկոսային կետով:** ԿԲ Խորհուրդը գտնում էր, որ հարաբերականորեն խստացող դրամավարկային քաղաքականությունը և ՀՀ դրամի արժևորումը աստիճանաբար կնպաստեն պահանջարկի զսպմանը և գնաճային սպասումների նվազմանը: Խորհուրդը նաև հետևողական է լինելու համարժեք գործողություններով ապահովելու գնաճի կայունացում և չեզոքացնելու գնաճային սպասումների ապախարսխման ցանկացած ռիսկ: Խորհուրդը միաժամանակ գնահատում էր, որ ընդհանուր մակրոտնտեսական կայունության ապահովման համար անհրաժեշտ կլինի նաև ՀՀ կառավարության կողմից զսպող հարկաբյուջետային քաղաքականության իրականացում: Դրամավարկային քաղաքականության նախանշված սցենարով 12-ամսյա գնաճն աստիճանաբար կնվազի և միջնաժամկետ հորիզոնում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

ԿԲ Խորհուրդը գնահատում էր, որ նախանշված ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հիմնականում հավասարակշռված են: Ռիսկերի որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:

Խորհուրդը հաստատեց ԿԲ գործիքների տոկոսադրույքների վերաբերյալ որոշումը և առաջարկվող մամուլի հաղորդագրությունը, որոնք կցվում են:

Տոկոսադրույքի որոշում

ԿՈՂ

050.0180 L. 01.11.22

01 նոյեմբերի 2022 թվականի թիվ 180 L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո շ ՈՒ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանել 10.5%:
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը սահմանել 12.0%:
3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը սահմանել 9.0%:
4. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ մամլո հաղորդագրությանը (կցվում է):
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային տնային էջում հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝

Մարտին Գալստյան

2022 թ. նոյեմբերի 1
Երևան

2022թ. նոյեմբերի 1-ի նիստում ԿԲ Խորհուրդը որոշեց բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 10.5%:

2022թ. սեպտեմբերին 12-ամսյա գնաճն ավելացել է և կազմել 9.9%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս ավելացել է՝ կազմելով 10.5%:

Համաշխարհային տնտեսությունում դիտարկվում են տնտեսական ակտիվության դանդաղման միտումներ: Զարգացած երկրների կենտրոնական բանկերը շարունակում են էականորեն խստացնել դրամավարկային պայմանները: Սա արտահայտվում է միջազգային ապրանքահումքային շուկաներում գների որոշակի նվազմամբ, սակայն ընդհանուր գնաճը ՀՀ հիմնական գործընկեր երկրներում դեռևս պահպանվում է բարձր: Չնայած առաջարկի արժեշրջանների որոշակի վերականգնմանը, առանձին շուկաներում դրանց խաթարումների հետ կապված ռիսկերը պահպանվում են: Արդյունքում՝ համաշխարհային տնտեսությունից ՀՀ տնտեսության վրա ակնկալվում են թույլ գնաճային ազդեցություններ:

2022թ-ի երրորդ եռամսյակում ՀՀ տնտեսությունում բարձր ակտիվության միտումները պահպանվում են: Տնտեսական աճը գերազանցապես կրում է արտաքին պահանջարկի դրական ազդեցությունը՝ արտահայտվելով ծառայությունների ոլորտի էական ավելացմամբ: Պահանջարկի ընդլայնմանը նպաստում է միջազգային այցելուների և ՌԴ-ից դրամական փոխանցումների ներհոսքի շարունակական աճը: Սա միաժամանակ արտահայտվում է ՀՀ արտաքին հաշվեկշռվածության դիրքի բարելավմամբ և դրամի փոխարժեքի արժևորմամբ: Բարձր պահանջարկը նպաստում է աշխատուժի շուկայի տաքացմանը, ընդհանուր գնաճային միջավայրի ընդլայնմանը և բարձր գնաճային սպասումների պահպանմանը: Նման իրավիճակում կարևորվում է հարկաբյուջետային և դրամավարկային կոորդինացված զսպող քաղաքականության իրականացումը:

Խորհուրդը նպատակահարմար է գտնում բարձրացնել քաղաքականության տոկոսադրույքը: Հարաբերականորեն խստացող դրամավարկային քաղաքականությունը և ՀՀ դրամի արժևորումը աստիճանաբար կնպաստեն պահանջարկի զսպմանը և գնաճային սպասումների նվազմանը: ԿԲ Խորհուրդը հետևողական է լինելու համարժեք գործողություններով ապահովելու գնաճի կայունացում և չեզոքացնելու գնաճային սպասումների ապախարսխման ցանկացած ռիսկ: Դրամավարկային քաղաքականության նախանշված սցենարում 12-ամսյա գնաճն աստիճանաբար կնվազի և միջնաժամկետ հորիզոնում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ նախանշված ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հիմնականում հավասարակշռված են: Ռիսկերի որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

հեռախոս. (010) 592592-0702

էլ-փոստ. mcba@cba.am

www.cba.am